«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Ռուս-Հայկական համալսարանի
Ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր
Է.Մ. Սանդոյան

«6» հուլիսի 2026թ.

ԿԱՐԾԻՔ

Մարիամ Մասիսի Հարությունյանի «Բնակչության կյանքի որակի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Ռուս-Հայկական համալսարանի «Տնտեսագիտության և ֆինանսների» ու «Կառավարման և բիզնեսի» ամբիոնների 2026 թվականի հուլիսի 6-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 14-26):

Մասնակցում էին՝
Ոսկանյան Մարիամ Համբարձումի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր, «Տնտեսագիտության և ֆինանսների» ամբիոնի վարիչ, **Գալստյան Անի Համլետի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ **(գրախոսող)**, **Սահակյան Մարիա Արմենակի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ **(գրախոսող)**, **Թուրյան Կարեն Վլադիմիրի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Հայրապետյան Վիկտորիյա Լեոնիդի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Սարգսյան Ռուզաննա Աշոտի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Խաչատրյան Հովակիմ Խաչիկի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Հանիսյան Հրայր Հովիկի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Ավետիսյան Լարիսա Աշոտի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Ստեփանյան Իվետա Կարենի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս **(գրախոսող)**, **Սիմոնյան Ռամելա Ակսելի՝** ավագ դասախոս, **Կարապետյան Անուշ Արմենի՝** ավագ դասախոս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեման արդիական է և համապատասխանում է ժամանակակից սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններին, քանի որ կյանքի որակի բարձրացման խնդիրն այսօր հանդիսանում է պետական քաղաքականության, տնտեսական զարգացման և հանրային կառավարման կարևորագույն ուղղություններից

մեկը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ տնտեսական աճն ինքնին բավարար չէ բնակչության բարեկեցության բարձր մակարդակ ապահովելու համար, և առավել մեծ ուշադրություն է դարձվում մարդու զարգացման, սոցիալական ներառման, կրթության, առողջապահության, անվտանգության և կյանքի այլ որակական բաղադրիչների բարելավմանը:

Ատենախոսությունում հեղինակը փորձ է կատարել համակարգված կերպով ուսումնասիրել կյանքի որակի տեսական հիմքերը, միջազգային և ազգային գնահատման մոտեցումները, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ցուցանիշների դինամիկան, ինչպես նաև բացահայտել կյանքի որակի վրա ազդող հիմնական գործոնները: Աշխատանքի կառուցվածքը տրամաբանական է և ներառում է հետազոտության նպատակներին համապատասխան երեք գլուխ, որոնցում ներկայացված են կյանքի որակի տեսական մեկնաբանությունները, դրա գնահատման մեթոդաբանական մոտեցումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնակչության կյանքի որակի գնահատման և կառավարման հիմնախնդիրները:

Ատենախոսության առավելություններից է կյանքի որակի ուսումնասիրման բազմակողմանի մոտեցումը, վիճակագրական տվյալների լայն օգտագործումը, ինչպես նաև կլաստերային և ռեգրեսիոն վերլուծության մեթոդների կիրառումը: Հեղինակի կողմից փորձ է արվել մշակել կյանքի որակի գնահատման համաթիվ, որը ներառում է տարբեր սոցիալ-տնտեսական ցուցանիշներ և կարող է կիրառվել կյանքի որակի համեմատական գնահատման նպատակներով: Գործնական նշանակություն ունեն նաև կյանքի որակի բարելավմանն ուղղված մի շարք առաջարկություններ, որոնք կարող են օգտակար լինել պետական կառավարման մարմինների համար սոցիալական և տնտեսական քաղաքականության մշակման գործընթացներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակը ՀՀ բնակչության կյանքի որակի կառավարման գործընթացում առկա հիմնախնդիրների լուծման համար կիրառվող մոտեցումների վերլուծությունն ու դրանց բարելավման ուղիների բացահայտումը: Դրված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել կյանքի որակի տեսական սկզբունքները և մեթոդաբանական հիմքերը,
- վերլուծել Հայաստանի Հանրապետությունում բնակչության կյանքի որակը բնութագրող սոցիալ-տնտեսական ցուցանիշները և դրանց դինամիկան, բացահայտել դրանց կարգավորման հնարավոր եղանակները,
- ուսումնասիրել և համեմատական վերլուծության ենթարկել կյանքի որակի գնահատման միջազգային չափանիշներն ու բազմաբնույթ մոտեցումները,

- բացահայտել եկամուտների բաշխման և բնակչության սոցիալական շերտավորման կառուցվածքային առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, ներկայացնել՝ կարգավորման կառուցակարգերը,
- բացահայտել կյանքի որակի վրա սոցիալ-տնտեսական փոփոխությունները պայմանավորող գործոնները բազմաչափ վերլուծության միջոցով՝ վեր հանելով կառավարման ենթակա առկա հիմնախնդիրները,
- մշակել կյանքի որակի գնահատման նոր մոդել՝ համաթվի կառուցման միջոցով,
- գնահատել Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը պայմանավորող գործոնների ազդեցությունը բնակչության կյանքի որակի վրա,
- մշակել քաղաքականություն իրականացնողներին ուղղված՝ ՀՀ բնակչության կյանքի որակի բարելավման հիմնական ուղիներ, և պետական կարգավորման կառուցակարգեր:

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակում կատարված վերլուծությունների արդյունքներն ունեն մեթոդական, ներառական և կիրառական նշանակություն, որոնց հիմնական արդյունքներն ու գիտական նորույթներն արտացոլվել են հետևյալ հիմնական դրույթներում.

1. Մշակվել է գնաճի մակարդակի վերահսկման և պատասխանատվության համատեղ կառավարման մոդել՝ ելնելով «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված գնաճի և փաստացի մակարդակների համեմատության արդյունքում արձանագրված զգալի շեղումներից, որի դեպքում նախատեսվել է պատասխանատվություն այն անձանց նկատմամբ, ովքեր նպաստել են այս հիմնախնդրի առաջացմանը:
2. Ռեգրեսիոն վերլուծության միջոցով կառուցվել է մոդել՝ կանխատեսելու ՀՀ ՀՆԱ-ի աճի տեմպը՝ ռուս-ուկրաինական պատերազմի ՀՀ տնտեսության վրա 2022 թ.-ից հետո ունեցած դրական շոկերի բացակայության պայմաններում:
3. Կլաստերային վերլուծության միջոցով խմբավորված քաղաքներում բացահայտվել են դրանց միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները՝ պայմանավորված ապրանքների և ծառայությունների սպառման ու գնային ինդեքսների տարբերություններով, որպես կառավարման կառուցակարգ դիտարկվել է տարբերակված մոտեցում տարածքային զարգացման քաղաքականության մեջ՝ ուղղված ցածր գնային կլաստերում ընդգրկված քաղաքներում աշխատատեղերի ստեղծման և տնտեսական ակտիվության բարձրացման անհրաժեշտությանը:
4. մշակվել է կյանքի որակի գնահատման համաթիվ, հիմնված 3 ոլորտներից ընտրված 24 ցուցանիշների հիման վրա՝ միավորելով միջազգային մասշտաբով և

ՀՀ-ում առավել հաճախ օգտագործվող տարբեր մեթոդաբանական մոտեցումները: Համաթիվը կարող է օգտագործվել ինչպես ՀՀ, այնպես էլ ուսումնասիրված 100 երկրների բնակչության կյանքի որակի գնահատման համար (կշիռների փոփոխման պարագայում):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը և հետազոտության հրատապությունը, ձևակերպվում են հետազոտության նպատակը և խնդիրները, հստակեցվում են հետազոտության օբյեկտը և առարկան, մեթոդաբանությունը, ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը, արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Կյանքի որակը որպես սոցիալ-տնտեսական կատեգորիա»** գլխում ներկայացվել են կյանքի որակ հասկացության տեսամեթոդաբանական հիմքերը, բացահայտվել են դրա հիմնական բնութագրիչներն ու սոցիալ-տնտեսական չափորոշիչները, վերլուծվել է ՀՀ-ում կյանքի որակի կարգավորման մոտեցումների և ցուցանիշների դինամիկան, ինչպես նաև իրականացվել է բնակչության կյանքի որակի համեմատական գնահատում՝ միջազգային չափանիշների համատեքստում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Բնակչության կյանքի որակի վերլուծությունը և գնահատումը սոցիալ-տնտեսական գործոնների և ցուցանիշների հիման վրա»** գլխում իրականացվել է կյանքի որակը բնութագրող ցուցանիշների և գնահատման մոտեցումների վերլուծություն, ուսումնասիրվել են բնակչության կյանքի որակի վրա ազդող հիմնական սոցիալ-տնտեսական գործոններն ու դրանց կառավարման մեխանիզմները, ինչպես նաև բազմաչափ վերլուծության միջոցով գնահատվել է ՀՀ-ում սոցիալ-տնտեսական փոփոխությունների ազդեցությունը կյանքի որակի վրա:

Ատենախոսության երրորդ՝ **«Բնակչության կյանքի որակի գնահատման և կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում»** գլխում մշակվել է բնակչության կյանքի որակի գնահատման համաթիվ, ռեգրեսիոն վերլուծության միջոցով գնահատվել է տնտեսական զարգացման կառուցվածքային գործոնների ազդեցությունը կյանքի որակի վրա, ինչպես նաև ներկայացվել են ՀՀ-ում կյանքի որակի կառավարման և բարելավման հիմնական ուղղություններն ու առաջարկությունները:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները և ներկայացված համապատասխան առաջարկությունները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունն ուսումնասիրում է բավականին արդիական և կիրառական նշանակություն ունեցող խնդիր, սակայն աշխատանքում առկա են մի շարք թերություններ, որոնք շարադրված են ստորև:

1. Ատենախոսության շրջանակներում երբեմն «կենսամակարդակ» և «կյանքի որակ» հասկացությունները օգտագործվում են փոխարինելիորեն, չնայած հենց դրանց տարբերությունն է կազմում աշխատանքի մեթոդաբանական հիմքը: Մեթոդաբանական հատվածում այս երկու հասկացությունների հստակ սահմանումն ու տարանջատումը տրված չէ:
2. Ատենախոսության առաջին և երկրորդ նորույթի կետերն այժմ իրենցից ներկայացնում են առանձին վերլուծական հատվածներ, որոնք միայն անուղղակիորեն են ինտեգրվում կյանքի որակի կառավարման համատեքստում: Մասնավորապես առաջին նորույթը, որն ուղղված է գնաճի մակարդակի վերահսկման և պատասխանատվության համատեղ կառավարման մոդելի մշակմանը և երկրորդ նորույթը, որի շրջանակներում իրականացվել է ՀՆԱ աճի տեմպերի կանխատեսում 2022թ. Դրական շոկի բացակայության պայմաններում: Աշխատանքն էականորեն կշահեր, եթե ներառեր այս հատվածների առավել հստակ ինտեգրում և հիմնավորում, որը ցույց կտար, թե ինչպես է յուրաքանչյուր արդյունք ազդում կառավարման շրջանակի վրա:
3. Ատենախոսության առաջին նորույթի շրջանակներում հեղինակի կողմից առաջարկվում է ներդնել «Գնաճային պատասխանատվության կառավարման մոդել», որը հիմնված է ՀՀ կենտրոնական բանկի, կառավարության, մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպությունների համագործակցության վրա՝ ուղղված գնաճի զգալի շեղումների արդյունքում սոցիալական պատասխանատվության կյանքի կոչմանը: Հայեցակարգն ինքն իրենով ներկայացնում է բարձր հետաքրքրություն և արժեք: Սակայն այն ավելի շատ նորմատիվ-ինստիտուցիոնալ առաջարկի է նման, քան գիտական նորույթի, հաշվի առնելով, որ բացակայում է ներդրման մեխանիզմի կամ նախագծի մշակումը, փոխարենը հեղինակը հիմնվում է Հաբերմասի և Նորթի կողմից առաջ քաշված դրույթների վրա: Առավել ևս, հաշվի առնելով, որ ՀՀ–ում գնաճի շեղումները թիրախից 2021-2022թթ.-ին մեծապես պայմանավորված են եղել ներմուծվող գնաճով, այլ ոչ դրամավարկային համակարգի անարդյունավետությամբ, կասկածելի է թվում նման շեղումների համար անձնական պատասխանատվությունը, միևնույն ժամանակ այնքան էլ չի համապատասխանում Կենտրոնական բանկի անկախությանը, չնայած, որ հեղինակի կողմից դեկլարատիվ բնույթով նշվում է «չսահմանափակելով և չխոչընդոտելով ԿԲ-ի անկախությանը և որոշումներին», առանց որևէ հստակ լուծման:

4. Հեղինակի երկրորդ նորույթի համար հիմք հանդիսացած ռեգրեսիոն վերլուծությունը կատարվել է 2005-2024թթ. համար, այսինքն 20 դիտարկում: Ատենախոսության մեջ բացակայում է մոդելի կայունության հիմնավորումն ու ապացույցը նման փոքր նմուշառման պարագայում: Ավելին, այս միջակայքը ընդգրկում է առնվազն երեք կառուցվածքային փոփոխության ժամանակաշրջաններ (2009, 2020, 2022), ինչը վիճակագրորեն անհիմն է դարձնում մեկ գծային ռեգրեսիայի գնահատումը՝ առանց կայունության թեստի (Չոու) կամ dummy բինար փոփոխականի ներմուծման: Առանձին կասկածի տեղիք են տալիս Աղյուսակ 2.2.4–ում ներկայացված մոդելի արդյունքները: Մասնավորապես, ներկայացված ստանդարտ շեղումը, t-վիճակագրությունը և P-արժեքները ներքին անհամապատասխանություն ունեն: t = coef/SE կապը չի բավարարվում որևէ գործակցի համար, իսկ հաստատունի (0.00165) և X_1 (0.000417) համար հաղորդված P-արժեքները անհամադրելի են ներկայացված t-վիճակագրության (–0.46 և 0.83) հետ, որոնք համապատասխանում են $p \approx 0.65$ և 0.42 արժեքներին, այսինքն նշված հաստատուն ու փոփոխականը նշանակալի չեն 5% մակարդակում: Սա լուրջ մտահոգության տեղիք է տալիս, ինչպե՞ս է ատենախոսը ստացել աղյուսակում ներկայացված թվերը, որոնք հիմք են հանդիսացել նշանակալիության մասին վարկածի հաստատման համար: Ցանկալի է ատենախոսի կողմից իրականացված հաշվարկների ներկայացում հենց կիրառված տնտեսաչափական ծրագրից:
5. Ատենախոսի կողմից ներկայացված երրորդ նորույթը, համաձայն որի նշվում է, որ «Կլաստերային վերլուծության միջոցով խմբավորված քաղաքներում բացահայտվել են դրանց միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները՝ պայմանավորված ապրանքների և ծառայությունների սպառման ու գնային ինդեքսների տարբերություններով, որպես կառավարման կառուցակարգ դիտարկվել է տարբերակված մոտեցում տարածքային զարգացման քաղաքականության մեջ՝ ուղղված ցածր գնային կլաստերում ընդգրկված քաղաքներում աշխատատեղերի ստեղծման և տնտեսական ակտիվության բարձրացման անհրաժեշտությանը», մեր կարծիքով չի պարունակում գիտական նորույթին բնորոշ տարրեր, ընդհանրությունների և տարբերությունների բացահայտումը, ինչպես նաև տարբերակված մոտեցման դիտարկումը չի կարող դիտարկվել որպես նորույթ:
6. Որպես հետազոտության հիմնական գիտական նորույթ ներկայացված կյանքի որակի գնահատման համաթվի մշակումը լիարժեք հիմնավորված չէ, քանի որ համապատասխան մասնագիտական գրականության մեջ կյանքի որակի համալիր ինդեքսների մշակումը վաղուց լայն տարածում ունի, և ատենախոսությունում բավարար չափով չի բացահայտվում, թե առաջարկվող համաթիվն ինչ սկզբունքային առավելություններ կամ տարբերություններ ունի արդեն գոյություն ունեցող մեթոդաբանությունների նկատմամբ: Միաժամանակ, հիմնավորված չեն

համաթվի բաղադրիչ ցուցանիշների ընտրությունը, քանի որ կարելի է պնդել նաև այլ ցուցանիշների կարևորությունը՝ օրինակ, էկոլոգիական վիճակը կամ աշխատանքային պայմանները արտահայտող: Այս առումով ներկայացված նորույթն ավելի շուտ կարելի է գնահատել որպես հայտնի մեթոդաբանությունների տեղայնացված կիրառություն Հայաստանի պայմաններում:

7. Ատենախոսության շրջանակում օգտագործված ցուցանիշների ընտրության տրամաբանությունը և դրանց կշիռների ձևավորման սկզբունքները ամբողջությամբ հիմնավորված չեն: Չի ներկայացվում, թե ինչու են ընտրվել հենց տվյալ ցուցանիշները և ինչ գիտական հիմնավորմամբ են բացառվել կյանքի որակի այլ կարևոր բաղադրիչներ, մասնավորապես՝ ինստիտուցիոնալ վստահությունը, քաղաքացիական մասնակցությունը, բնակարանային պայմանները կամ հոգեկան առողջության և այլ ցուցանիշները:
8. Աշխատանքում բացակայում է հետազոտական վարկածների (հիփոթեզի) հստակ ձևակերպումը: Տնտեսաչափական մեթոդների կիրառման պարագայում աշխատանքն էականորեն կշահեր ստուգելի վարկածների առաջ քաշման պարագայում:
9. Աշխատանքում հանդիպում են լեզվաոճական որոշ թերություններ, մասնավորապես, Մարդկային զարգացման ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացնելիս, հեղինակը կրթության միջին և սպասվող տևողությունները թարգմանել է «Դպրոցական ուսուցման սպասվող տարիներ» և «Դպրոցական ուսուցման միջին տարիներ» (էջ 78), ինչը «scholling» հասկացությունը չի արտահայտում (տես ՄԶՀ հաշվարկման համաթիվ- https://hdr.undp.org/sites/default/files/2023-24_HDR/hdr2023-24_technical_notes.pdf էջ 3):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողությունները բնավ չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը, արդյունքների տեսական ու կիրառական նշանակությունը:

Մարիամ Մասիսի Հարությունյանի «Բնակչության կյանքի որակի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են 7 գիտական հոդվածներում:

Ատենախոսության սեղմագիրը համարժեքորեն արտացոլում է աշխատանքի բովանդակությունն ու արդյունքները:

Այսպիսով, Մարիամ Մասիսի Հարությունյանի **«Բնակչության կյանքի որակի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)»** թեմայով ատենախոսությունը

համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝
Ռուս-Հայկական համալսարանի
«Տնտեսագիտության և ֆինանսների»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Մ.Հ. Ոսկանյան**

Ռուս-Հայկական համալսարանի
«Տնտեսագիտության և ֆինանսների» ամբիոնի
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Ա. Հ. Գալստյան**

Ռուս-Հայկական համալսարանի
«Կառավարման և բիզնեսի» ամբիոնի
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Մ. Ա. Սահակյան**

Ռուս-Հայկական համալսարանի
«Տնտեսագիտության և ֆինանսների» ամբիոնի
ավագ դասախոս, տնտ. գիտ. թեկնածու՝ **Ի.Կ. Ստեփանյան**

Ռուս-Հայկական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝ **Ռ. Ս. Կասաբաբովա**